ուած էր «Каспійско – Черноморское Общество»— ի հողի վրայ։ Ամբողջ պաւիլիոնը ծածկուած էր Բուխարայի մետաքսեղէններով։ Այս տեղ օղոստափառ Այցելուներին գործարանատէրերը մատուցին ալբոմ, որտեղ նկարուած էր նաֆթի գործարանների գործողութիւնները։

Երեկոյեան ժամը 7ին՝ հացի ժամանակ, բացի շքախմբի անդամները, հրաւիրուեցան նաեւ գինուորական ծառայողները։ Հրաւիրուեցաւ տոմսակով նմանապէս և Բագուի նահանգի հայոց Առաջնորդ Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանցը, որին աթոռ էր տուած ուղղակի Կայսեր և Կայսրուհու և Ժառանգի դիմացը, ընդ մէջ Էկզարքոսին և Կառավարչապետին։ Այլ և քաղաքագլուխ պ. Դեսպօտ Զենովիչ և խորհրդի անդամ պ. Յակոբ Ադամեանց և Անտօնեանցը, գործարանատէրերից պ. Նոբէլ, Ծատուրեանց, Միրզայեանց, Դէբուր, Թաղիեվ և այլն։

Առաջին բաժակը Նորին Մեծութիւնը խմեց քաղաքի յառաջդիմութեան և գործող անձանց կենացը։ Երկրորդ բաժակը Վրաստանի էքզարխը խմեց Կայսեր կենացը, երրորդ բաժակը իշխան կառավարչապետը խմեց Կայսրուհուց կենացը։ Ճաշից յետոյ ժամի 10ին Նոցին Մեծութիւնք և Օղոստափառ արքիք բոլոր շքախմբով բարեհաճեցին դուրս գալ Բագուից։ Քաղաքի բնակիչները ուրախ կեցցէներով ճանապարհ ձգեցին իւրեանց Մեծ Հիւրերին մինչեւ երկաթուղւոյ կայարանը»։

Ցիշեալ նկարագրութիւնը՝ Կայսեր ի Բագու գալստեան՝ թարգմանութիւն է Բագուի Каспій անուանեալ ռուս լրագրից՝ գրուած 9,10 և 11 հոկտ. տոյն 1888 տմի, հմ. 214,215 և 216։ Որովհետեւ սակաւ է պատահում հայ հոգեւորականներիս Կայսերական հացկերութեան արժանանալ, և հրաւիրանաց Կայսերական տեսութեան, և ունկնդրութեան, և որպէս զի ապագայ հոգեւորականաց ծանօթութիւն տամ այսպիսի նշանաւոր առարկայից վրայ, ուստի կարեւոր համարեցի արտագրել և դնել գրքիս մէջ որպէս Տ. Մակար Կաթուղիկոսի հմ. 334 կոնդակն՝ որ վերեւը յերես 404 գրուած է, և յանուն իմ գրած Բագուի Նահանգապետի հրաւիրանաց տոմսակն, որով ի թիւս